ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ-92-2025
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «07» փետրվարի 2025 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրությա հիման վրա, մի կողմից, և «Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրեն Արտաշես Բաբայանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1168. Արվեստների ծրագիր» ծրագրի «11003. Թատերական ներկայացումներ» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում կատարել սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները և իր կանոնադրությամբ նախատեսված գործառույթները, այդ թվում թատերական ծրագրերի ստեղծում, իրականացում, հանդիսատեսի սպասարկում և այլ գործառույթներ (այսուհետ՝ միջոցառումներ)՝ ըստ սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող.

1.1.1. ներկայացումների կանխատեսվող ոչ ֆինանսական ցուցանիշների՝ համաձայն Հավելված N 1-ի,

1.1.2. խաղացանկի՝ համաձայն Հավելված N 2-ի,

1.1.3. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի՝ համաձայն Հավելված N 3-ի:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.4-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.5-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը, կամ նշված գումարի չափով պակասեցնելու հետագա տարիների ֆինանսավորումը, կամ հետագա տարիների պայմանագրերով պարտավորեցնել լրացնելու ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարումը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները,

2.1.8. սույն պայմանագրի 2.4-րդ կետով նախատեսված պարտավորությունները վերանայել (փոփոխություն կատարել) նախորդ տարվա հաշվետվությունների արդյունքների հիման վրա:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառման արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. կազմակերպության ֆինանսական միջոցներից օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենին եռամսյակային պարբերականությամբ վճարել պարգևատրում՝ տոմսերի վաճառքից նախորդ եռամսյակի ընթացքում ստացված հասույթի 5 (հինգ) տոկոսի չափով և լրացուցիչ 3 (երեք) տոկոսի չափով՝ հիմնական կատարողական ցուցանիշների ամբողջական կատարման համար,

2.2.5. վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են լրամշակման՝ դրա համար սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե իրականացված միջոցառումների ներկայացված հաշվետվությունները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ապահովել կազմակերպության գործունեությունը կազմակերպության կանոնադրական նպատակներին և խնդիրներին համապատասխան,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքները՝ ապահովելով խաղաացանկի առնվազն 20% հայ դասական և ժամանակակից, այդ թվում երիտասարդ և սփյուռքահայ հեղինակի/դրամատուրգի ստեղծագործությունների ընդգրկումը, այդ թվում՝ բոլորովին նոր և երբևիցե չկատարված հայ հեղինակի/դրամատուրգի ստեղծագործության առնվազն 1 (մեկ) առաջնախաղ, նախկինում բեմականացված կամ կատարված առնվազն 1 (մեկ) ստեղծագործության վերականգնում,

2.4.3. ստեղծագործական և նորարական ծրագրերի իրականացման ժամանակ առաջնահերթության կարգով ապահովել պետական և երիտասարդական մրցանակների

արժանացած, միջազգային և հանրապետական փառատոների, մրցանակաբաշխության դափնեկիր երիտասարդ ստեղծագործողների ներգրավվածությունը,

2.4.4. ապահովել ստեղծագործական բուհերի «Արվեստի կառավարում» մասնագիտությամբ սովորող ուսանողների պրակտիկայի (փորձառության) ձեռքբերման ծրագրի իրականացումը,

2.4.5. ապահովել գեղարվեստական արդյունքի հասանելիությունը ՀՀ մարզերի, մասնավորաբար՝ համայնքների բնակիչների (ըստ հնարավորության նաև սահմանամերձ), պատերազմից տուժած, հաշմանդամություն ունեցող զինծառայողների, զոհված զինվորների ընտանիքների համար (2 միջոցառում): Ներառական ծրագրերի իրականացման ընթացքում սերտորեն համագործակցել առողջապահության ոլորտի համապատասխան մասնագիտական կառույցների հետ,

2.4.6. մինչև 2025 թվականի դեկտեմբերի 1-ը պետական մարմնին ներկայացնել կազմակերպության 2026 թվականի խաղացանկը,

2.4.7. Կազմակերպությունը պարտավորվում է իր տարեկան խաղացանկում ընդգրկել պետության համար հատուկ նշանակություն ունեցող 3 (երեք) տոներից (Հայաստանի Հանրապետության տոն (մայիսի 28), Սահմանադրության օր (հուլիսի 5) և Անկախության տոն (սեպտեմբերի 21) առնվազն 1-ին (մեկին) նվիրված միջոցառում,

2.4.8. յուրաքանչյուր եռամսյակ (եռամսյակի ավարտից հետո տասնօրյա ժամկետում) պետական մարմնին ներկայացնել արվեստի ոլորտում տվյալ եռամսյակում հիմնական կատարողական ցուցանիշները (ՀԿՑ)՝ համաձայն Հավելված N 4-ի (աճողական կարգով),

2.4.9. Ֆրանկոֆոնիայի երկամսյակի շրջանակներում (մարտ-ապրիլ) իրականացնել թատերական միջոցառումներ,

2.4.10. պետական մարմնի առաջարկությամբ մասնակցել պետական մարմնի կողմից իրականացվող կամ հովանավորվող մշակութային միջոցառումներին (փառատոներ, մրցույթներ, հանդիսավոր երեկոներ, հոբելյանական միջոցառումներ),

2.4.11. կազմակերպությանն ամրացված տարածքներում երրորդ անձանց կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառում իրականացնելու համար ծառայությունների մատուցման գործընթացը իրականացնել համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի փետրվարի 24-ի N 213-Ա հրամանի,

2.4.12. պետական մարմնի պահանջով հնարավորություն ընձեռել տարեկան առնվազն 20 (քսան) օր կազմակերպությանն ամրացված տարածքներում պետական մարմնի ենթակայությամբ գործող և այլ կազմակերպությունների անվճար կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառում իրականացնելու համար,

2.4.13. պետական մարմնի պահանջով, ըստ անհրաժեշտության, ներկայացնել գովազդատեղեկատվական նյութերի նախագծերը, նոր ծրագր(եր)ի վերաբերյալ ոլորտի մասնագետների եզրակացությունները, ինչպես նաև ապահովել դրա փակ նախնական ունկնդրումը պետական մարմնի ներկայացուցիչների համար,

2.4.14. յուրաքանչյուր եռամսյակ պետական մարմնին ներկայացնել ինքնազբաղ անկախ ստեղծագործողների մասնակցությամբ միջոցառումների ցանկը,

2.4.15. իրականացնել ծրագրերի հանրայնացման անհրաժեշտ գովազդատեղեկատվական արշավներ սոցիալական հարթակներում (տոմսերի վաճառքի

հարթակները սոցիալական հարթակներ չեն համարվում): Միջոցառումների իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ազդագրեր, հրավիրատոմսեր, պաստառներ՝ ներառյալ էլեկտրոնային տարբերակները) պարտադիր կերպով հրապարակել ՀՀ զինանշանը և պետական մարմնի անվանումը՝ պահպանելով «Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Գովազդատեղեկատվական բնույթի այլ հրապարակումներում (մամուլի հրապարակումներ, ներկայացումների ծրագիր-բուկլետներ, տեսահոլովակներ, մամլո հաղորդագրություններ, ասուլիսներ, գրավոր և/կամ բանավոր այլ խոսք) կազմակերպությունը պարտավոր է ոչ միայն հրապարակել ՀՀ զինանշանն ու պետական մարմնի անունը, այլև նշել պետական մարմնի մասնակցության ձևաչափը (պետական մարմնի ֆինանսավորմամբ, պետական մարմնի աջակցությամբ), որը կարող է արտահայտվել ինչպես ուղղակի ֆինանսավորման, այնպես էլ թատերահամերգային դահլիճների տրամադրման և կազմակերպական այլ աջակցության տեսքով:

Համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ միջոցառումներին աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.16. եռամսյակային հաշվետվություն ներկայացնել պետական մարմնին հրապարակային հարթակներում (կայքէջ, Facebook, Youtube, Instagram և այլն) կազմակերպության հետևորդների քանակի, ինչպես նաև յուրաքանչյուր միջոցառման գովազդային շահառուների (Like, Share) մասին,

2.4.17. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.18. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն վերացնելու համար,

2.4.19. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.20. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.21. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին, ինչպես նաև ներկայացնել սույն պայմանագրի կատարմանը վերաբերող ֆինանսական և բովանդակային հաշվետվությունները (ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ): Բովանդակային հաշվետվությամբ ներկայացվում է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման, հրապարակման և ընթացքի, այդ թվում՝ արդյունքների գնահատման, մասնակիցների քանակի վերաբերյալ,

կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլն, ներառյալ՝ իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում պետական մարմնի վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար,

2.4.22. պետական մարմնին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով: Փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար,

2.4.23. պետական մարմնի կողմից հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.24. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան, իսկ միջոցառումների համար կազմակերպության կողմից ընդգրկվող աշխատողների հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորել ՀՀ Աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով,

2.4.25. պետական մարմնի հետ նախապես համաձայնեցնել նրա իրավասությանը վերապահված հարցերի լուծման տարբերակները,

2.4.26. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.27. սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո օրենսդրությամբ սահմանված կարգով պետական մարմնի հաստատմանը ներկայացնել կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը՝ համապատասխան հիմնավորումներով: Նախահաշվի յուրաքանչյուր ծախսային ուղղության մեջ կատարվող փոփոխությունը նախապես՝ մինչև փաստացի ծախսերի կատարումը օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցնել պետական մարմնի հետ: Նախահաշվում փոփոխությունների ներկայացման առաջարկի վերջնաժամկետն է 2025 թվականի դեկտեմբերի 15-ը,

2.4.28. սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո կազմակերպությունը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2026 թվականի հունվարի 24-ը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանն է վճարում **254000.0** հազար (երկու հարյուր հիսունչորս միլիոն) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները): Այդ գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարը պետական մարմինը կազմակերպությանն է վճարում սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ժամկետներում, կազմակերպության՝ սույն պայմանագրում նշված գանձապետական հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով:

3.3. Կազմակերպության կողմից միջոցառումների կատարման՝ սույն պայմանագրով սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտելու դեպքում պետական մարմինն իրավունք ունի վերանայել սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը:

3.4. Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2025 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1-ին կետում նշված և կատարված միջոցառումների մասով կազմակերպությունը, ոչ ուշ, քան յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով ոչ ուշ, քան 2026թ. հունվարի 20-ը պետական մարմնին է ներկայացնում արվեստի ոլորտում տվյալ եռամսյակում հիմնական կատարողական ցուցանիշները (ՀԿՑ)՝ համաձայն Հավելված N 4-ի և ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն Հավելված N 5-ի: Տարեկան ցուցանիշների և հաշվետվության ամփոփման արդյունքում տրված դրական եզրակացության հիման վրա պետական մարմնի կողմից կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն՝ համաձայն Հավելված N 6-ի:

5.2. Սույն պայմանագրի N 1, N 2 և N 4 Հավելվածներում ներառված ցուցանիշներում չեն կարող ներառվել պետական, համայնքային և այլ ֆինանսավորմամբ իրականացվող այլ ծրագրերի (բաժանորդային համակարգ, մրցույթով և առանց մրցույթի դրամաշնորհի ձևով հատկացվող ֆինանսավորում և այլն) արդյունքները:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ

ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ սույն պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու կամ կանխատեսվող եկամուտներից զրկելու համար կողմերից յուրաքանչյուրը կրում է պատասխանատվություն մյուս կողմին պատճառած վնասների և բաց թողնված օգուտների լրիվ ծավալով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ սույն պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների և բաց թողնված (չստացված) եկամուտների լրիվ չափով փոխհատուցում:

6.3. Սույն պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելը աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում մյուս կողմն իրավունք ունի կամ ստանալ սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել սույն պայմանագրի հարկադիր կատարումը:

6.4. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում՝ ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.5. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

6.6. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.7. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.8. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է սույն պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոն» ՊՈԱԿ
Երևան, Վ. Սարգսյան 3	ք. Երևան, Սայաթ-Նովա 4
Կառավարական տուն N 2	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ 900018001959, ՀՎՀՀ 02516413
Հ/Հ 900011032837 ՀՎՀՀ 02698732	Հեռ՝ /010/ 52-02-54
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
---------- Հ. Հակոբյան	---------- Ա. Բաբայան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ. Տ. 02698732	Կ. Տ.

Հավելված N 1
«07» «02» 2025 թ.
N ՄՇԴ-92-2025 պայմանագրի

2025 թվականին «Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոն» ՊՈԱԿ-ի կանխատեսվող ոչ ֆինանսական ցուցանիշները

Ցուցանիշներ	**Միավոր**	**Քանակ**
1. Հանդիսատեսի թվաքանակ, այդ թվում	մարդ	115920
մեծ դահլիճ	մարդ	101520
փոքր դահլիճ	մարդ	14400
իգական սեռի	*մարդ*	57960
արական սեռի	*մարդ*	57960
2. Ներկայացումների քանակ, այդ թվում՝	հատ	723
մեծ դահլիճ	*հատ*	423
փոքր դահլիճ	*հատ*	300
3.Նոր ներկայացումների քանակ	*հատ*	5
4. Մեկ ներկայացման համար դահլիճի միջին բեռնվածությունը (%)[1]		
մեծ դահլիճ	տոկոս	75
փոքր դահլիճ	տոկոս	75

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032837 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
---------- Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Սայաթ-Նովա 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001959, ՀՎՀՀ 02516413
Հեռ՝ /010/ 52-02-54
Տնօրեն՝
---------- Ա. Բաբայան
(ստորագրություն)
Կ. Տ.

[1] *հաշվարկվում է միայն վաճառված տոմսերի քանակով*

Հավելված N 2
«07» «02» 2025 թ.
N ՄՇԴ-92-2025 պայմանագրի

«Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոն» ՊՈԱԿ-ի
2025 թվականի
ԽԱՂԱՑԱՆԿ

N	Ներկայացման անվանումը	հեղինակը	ամսաթիվը*	ժամը*	Հրավիրված դերասան*	Այլ
1-5	Ոչ մի ամանոր առանց Թեդդի մ/դ		02/01/25	12:00//14:00// 16:00//18:00//19:30	Սուրեն Պողոսյան, Ռուզան Մանուչարյան, Արսեն Ներսիսյան, Ալեքյան Մարիամ, Խարիբյան Նարեկ, Ալեքսանյան Գոռ, Անտոնյան Դավիդ, Դարբինյան Խաչիկ, Հակոբյան Տիրուհի, Մանուչարյան Նարեկ, Արսեն Բունաթյան, Թադևոսյան Սոս, Բերբերյան Էլեն, Մացակյան Մարիամ, Կալամադարյան Ավո, Պողոսյան Աննա, Թորիկյան Սերգեյ	
6-10	Ձնեմարդուկները		02/01/25	12:00//14:00// 16:00//18:00//19:30		02/01/2025 1-5. փ/դ
11-15	Ոչ մի ամանոր առանց Թեդդի մ/դ		03/01/25	12:00//14:00// 16:00//18:00//19:30		
16-20	Ձնեմարդուկները		3/01/25	12:00//14:00// 16:00//18:00//19:30		6-10. փ/դ
21-25	Ոչ մի ամանոր առանց Թեդդի մ/դ		4/01/25	12:00//14:00// 16:00//18:00//19:30		
26-30	Ձնեմարդուկները		4/01/25	12:00//14:00// 16:00//18:00//19:30		11-15. փ/դ
31-35	Ոչ մի ամանոր առանց Թեդդի մ/դ		5/01/25	12:00//14:00// 16:00//18:00//19:30		
36-40	Ձնեմարդուկները		5/01/25	12:00//14:00// 16:00//18:00//19:30		16-20. փ/դ
41-45	Ոչ մի ամանոր առանց Թեդդի մ/դ		9/01/25	12:00//14:00// 16:00//18:00//19:30		
46-50	Ձնեմարդուկները		9/01/25	12:00//14:00// 16:00//18:00//19:30		21-25. փ/դ
51-55	Ոչ մի ամանոր առանց Թեդդի մ/դ		10/01/25	12:00//14:00// 16:00//18:00//19:30		
56-60	Ձնեմարդուկները		10/01/25	12:00//14:00// 16:00//18:00//19:30		26-30. փ/դ
61-65	Ոչ մի ամանոր առանց Թեդդի մ/դ		11/01/25	12:00//14:00// 16:00//18:00//19:30		
66-70	Ձնեմարդուկները		11/01/25	12:00//14:00// 16:00//18:00//19:30		31-35. փ/դ
71-75	Ոչ մի ամանոր առանց Թեդդի մ/դ		12/01/25	12:00//14:00// 16:00//18:00//19:30		

76-80	Ձնեմարդուկները		12/01/25	12:00//14:00// 16:00//18:00//19:30		36-40. փ/դ
81-82	Երեք խոզուկը մ/դ		18/01/25	12:00//14:00		
83-87	Մատնաչափիկը		18/01/25	12:00//13:30//15:00 //16:30//18:00		41-45. փ/դ
88-90	Առյուծն ու խաղալիքը մ/դ		19/01/25	12:00//14:00//16:00	Էլեն Բերբերյան	
91-92	Կոկորդիլոսը		19/01/25	16:00//18:00		46-47. փ/դ
93	Իմ ընտանիքը իմ ճամպրուկում է մ/դ		19/01/25	19:30	Նարինե Գրիգորյան	
94	Բուկովսկի		23/01/25	19:30	Մարիամ Ալեքյան , Նարեկ Ալեքսանյան	48. փ/դ
95-96	Մեր քաղաքի կանոնները մ/դ		25/01/25	12:00//14:00	Տիրուհի Հակոբյան	
97-99	Դետեկտիվ Ալենը		25/01/25	15:00//16:30//18:00		49-51. փ/դ
100-101	Եվ նորից կարմիր գլխարկը մ/դ		26/01/25	12:00//14:00		
102-104	Ոսկե ճուտիկը		26/01/25	15:00//16:30//18:00	Տիրուհի Հակոբյան	52-54. փ/դ
Փետրվար 2025						
105-106	Գայլի և ուլիկների արկածները մ/դ		1/02/25	12:00//14:00		
107-109	Մատնաչափիկը		1/02/25	15:00//16:30//18:00		55-57. փ/դ
110-111	Թզուկի երգը մ/դ		2/02/25	12:00//14:00		
112-113	Կոկորդիլոսը		2/02/25	16:00//18:00		58-59. փ/դ
114-115	Երեք խոզուկը մ/դ		8/02/25	12:00//14:00		
116-118	Կարմիր գլխարկը		8/02/25	15:00//16:30//18:00		60-62. փ/դ
119-120	Վինի փուհ արջուկը մ/դ		9/02/25	12:00//14:00		
121-123	Ոսկե ճուտիկը		9/02/25	15:00//16:30//18:00		63-65. փ/դ
124-125	Հենց էն Հուռին մ/դ		18/02/25	12:00//14:00		
126-127	Սուտլիկ որսկանը մ/դ Անխելք մարդը		19/02/25	12:00//14:00		66-67. փ/դ
128-129	Անհաղթ աքլորը մ/դ		20/02/25	12:00//14:00		
130-131	Պոչատ աղվեսը մ/դ		21/02/25	12:00//14:00		
132-133	Պոչատ աղվեսը մ/դ		22/02/25	12:00//14:00//		
134-136	Կոկորդիլոսը		22/02/25	16:00//18:00		68-69. փ/դ

137-138	Առյուծն ու խաղալիքը մ/դ		23/02/25	12:00//14:00//		
139-141	Մատնաչափիկը		23/02/25	15:00//16:30//18:00		70-72. փ/դ
մարտ						
142-144	Ծուղ-րու-ղու մ/դ		1/03/25	12:00//14:00//16:00//		
145-148	Դետեկտիվ Ալենը		1/03/25	12:00//13:30//15:00//18:00		73-76. փ/դ
149-151	Սյունեցի Գոռը մ/դ		2/03/25	12:00//14:00//16:00//		
152-155	Դում-դում իմաստունները և անգետները		2/03/25	12:00//13:30//15:00// 18:00		77-80. փ/դ
156-158	Սյունեցի Գոռը մ/դ		6/03/25	12:00//14:00//16:00//		
159-161	Եվ նորից կարմիր գլխարկը մ/դ		8/03/25 շաբաթ	12:00//14:00//16:00//		
162-165	Մատնաչափիկը		8/03/25 շաբաթ	12:00//13:30//15:00// 18:00		81-84. փ/դ
166-168	Շունն ու կատուն մ/դ		9/03/25 կիրակի	12:00//14:00//16:00		
169-172	Կախարդական հեքիաթներ		9/03/25 կիրակի	12:00//13:30//15:00//18:00		85-88. փ/դ
173	Ядесь/ Օսկար մ/դ		17/03/25	19:30	Ներսես Ավետիսյան, Անի Խաչիկյան, Լուսինե Կոստանյան , Արամ Կարախանյան , Միքաել Վաթինյան	
174-176	Գուլիվերի արկածները մ/դ		15/03/25 շաբաթ	12:00//14:00//16:00		
177-178	Կոկորդիլոսը		15/03/25 շաբաթ	16:00//18:00		89-90. փ/դ
179-181	Գուլիվերի արկածները մ/դ		16/03/25 կիրակի	12:00//14:00//16:00		առաջնախաղ
182-184	Մատնաչափիկը		16/03/25 կիրակի	12:00//13:30//15:00 18:00		91-94. փ/դ
185	Ядесь/ Օսկար մ/դ		20/03/25	19:30		
186-	Փոքրիկ Իդայի ծաղիկները մ/դ		22/03/25	12:00//14:00//16:00		

188			շաբաթ			
189-192	Դետեկտիվ Ալենը		22/03/25 շաբաթ	12:00//13:30//15:00//18:00		95-98. փ/դ
193-195	Անհաղթ աքլորը մ/դ		23/03/25 կիրակի	12:00//14:00//16:00		
196-199	Ոսկե ճուտիկը		23/03/25 կիրակի	12:00//13:30//15:00//18:00		99-102. փ/դ
200-201	Պոչատ աղվեսը մ/դ		29/03/25 շաբաթ	12:00//14:00		
202-203	Կոկորդիլոսը		29/03/25 շաբաթ	16:00//18:00		103-104. փ/դ
204-205	Առյուծն ու խաղալիքը մ/դ		30/03/25 Կիրակի	12:00//14:00		
206-208	Մատնաչափիկը		30/03/25 Կիրակի	15:00//16:30//18:00		105-107. փ/դ
				ապրիլ		
209-210	Շունն ու կատուն մ/դ		5/04/25 շաբաթ	12:00//14:00//		
211-212	Կոկորդիլոսը		5/04/25 շաբաթ	16:00//18:00		108-109. փ/դ
213-214	Սուտլիկ որսկանը մ/դ		6/04/25 կիրակի	12:00//14:00//		
215-218	Մատնաչափիկը		6/04/25 կիրակի	12:00//13:30//15:00 // 18:00		110-113. փ/դ
219	Իմ ընտանիքը իմ ճամպրուկի մեջ է մ/դ		7/04/25	19:30	Նարինե Գրիգորյան	
220-221	Ոզնու Մուշտակը մ/դ		12/04/25 շաբաթ	12:00//14:00//		
222-225	Ոսկե ճուտիկը		12/04/25 շաբաթ	12:00//13:30//15:00 // 18:00		114-117.փ/դ
226-227	Ծուղ-ռու-ղու մ/դ		13/04/25 կիրակի	12:00//14:00//		
228-231	Դետեկտիվ Ալենը		13/04/25 կիրակի	12:00//13:30//15:00 // 18:00		118-121. փ/դ
232	Ябдесь/ Օսկար մ/դ		14/04/25	19:30		
234-235	Անհաղթ աքլորը մ/դ		19/04/25 շաբաթ	12:00//14:00//		
236-	Կախարդական հեքիաթներ		19/04/25	12:00//13:30//15:00//18:00		122-125. փ/դ

239			շաբաթ			
240-241	Սյունեցի Գոռը մ/դ		20/04/25 կիրակի	12:00//14:00		
242-245	Դետեկտիվ Ալենը		20/04/25 կիրակի	12:00//13:30//15:00//18:00		126-129. փ/դ
246	Комментарии непристойного Тома փ/դ		21/04/25	19:30		130. փ/դ
247-248	Երեք խոզուկ մ/դ		26/04/25 շաբաթ	12:00//14:00//		
249-252	Ճնճղուկը		26/04/25 շաբաթ	12:00//13:30//15:00//18:00		131-134. փ/դ
253-254	Սուտլիկ որսկանը մ/դ		27/04/25 կիրակի	12:00//14:00//		
255-258	Կարմիր գլխարկը		27/04/25 կիրակի	12:00//13:30//15:00//18:00		135-138. փ/դ
259	Яздесь մ/դ		28/04/25	19:30		
				մայիս		
260	Իմ ընտանիքը իմ ճամպրուկում է մ/դ		5/05/25	19:30	Նարինե Գրիգորյան	
261-262	Ծուղ-ռու-ղու մ/դ		3/05/25 շաբաթ	12:00//14:00//		
263-266	Դետեկտիվ Ալենը		3/05/25 շաբաթ	12:00//13:30//15:00//18:00		139-142. փ/դ
267-268	Սյունեցի Գոռը մ/դ		4/05/25 կիրակի	12:00//14:00//		
269-272	Դում-դում իմաստունները և անգետները		4/05/25 կիրակի	12:00//13:30//15:00//18:00		143-146. փ/դ
273-274	Սյունեցի Գոռը մ/դ		12/05/25	12:00//14:00		
275-276	Եվ նորից կարմիր գլխարկը մ/դ		10/05/25 շաբաթ	12:00//14:00//		
277-280	Մատնաչափիկը		10/05/25 շաբաթ	12:00//13:30//15:00//18:00		147-150. փ/դ
281-282	Շունն ու կատուն մ/դ		11/05/25 կիրակի	12:00//14:00		
283-287	Կախարդական հեքիաթներ		11/05/25 կիրակի	12:00//13:30//15:00//16:30/18:00		151-155. փ/դ

288	Ясдесь/ Оսկար մ/դ		15/05/25	19:30		
289-290	Երեք խոզուկ մ/դ		17/05/25 շաբաթ	12:00//14:00//		
291-292	Կոկորդիլոսը		17/05/25 շաբաթ	16:00//18:00		156-157. փ/դ
293-294	Հենց էն Հուռին մ/դ		18/05/25 կիրակի	12:00//14:00//		
295-298	Մատնաչափիկը		18/05/25 կիրակի	12:00//13:30//15:00//18:00		158-161. փ/դ
299	Ясдесь/ Оսկար մ/դ		22/05/25	19:30		
300-301	Առյուծն ու խաղալիքը մ/դ		24/05/25 շաբաթ	12:00//14:00//		
302-305	Դետեկտիվ Ալենը		24/05/25 շաբաթ	12:00//13:30//15:00//18:00		162-165. փ/դ
306-307	Անհաղթ աքլորը մ/դ		25/05/25 կիրակի	12:00//14:00//		
308-311	Ոսկե ճուտիկը		25/05/25 կիրակի	12:00//13:30//15:00//18:00		166-169. փ/դ
312-313	Մեր քաղաքի կանոնները մ/դ		31/05/25 շաբաթ	12:00//14:00//		
314-317	Մատնաչափիկը		31/05/25 շաբաթ	12:00//13:30//15:00//18:00		170-173. փ/դ
				հունիս		
318-319	Ծուղ-ռու-ղու մ/դ		1/06/25 շաբաթ	12:00//14:00//		
320-323	Դետեկտիվ Ալենը		1/06/25 շաբաթ	12:00//13:30//15:00//18:00		174-177. փ/դ
324-325	Կորժետա բլու մ/դ		9/06/25	12:00//14:00//		առաջնախաղ
326-327	Եվ նորից կարմիր գլխարկը մ/դ		7/06/25 շաբաթ	12:00//14:00//		
328-331	Մատնաչափիկը		7/06/25 շաբաթ	12:00//13:30//15:00//18:00		178-181. փ/դ
332-333	Շունն ու կատուն մ/դ		8/06/25 կիրակի	12:00//14:00//		
334-	Կախարդական		8/06/25	12:00//13:30//15:00		182-185. փ/դ

337	հեքիաթներ		կիրակի	//18:00		
338	Յեզդեսե/ Օսկար մ/դ		16/06/25	19:30		
339-340	Երեք խոզուկ մ/դ		14/06/25 շաբաթ	12:00//14:00//		
341-342	Կոկորդիլոսը		14/06/25 շաբաթ	16:00//18:00		186-187. փ/դ
343-344	Հենց էն Հուռին մ/դ		15/06/25 կիրակի	12:00//14:00//		
345-348	Մատնաչափիկը		15/06/25 կիրակի	12:00//13:30//15:00//18:00		188-191. փ/դ
349	Յեզդեսե/ Օսկար մ/դ		23/06/25	19:30		
350-351	Փոքրիկ Իդայի ծաղիկները մ/դ		21/06/25 շաբաթ	12:00//14:00//		
352-355	Դետեկտիվ Ալենը		21/06/25 շաբաթ	12:00//13:30//15:00//18:00		192-195. փ/դ
356-357	Անհաղթ աքլորը մ/դ		22/06/25 կիրակի	12:00//14:00//		
358-361	Ոսկե ճուտիկը		22/06/25 կիրակի	12:00//13:30//15:00//18:00		196-199. փ/դ
362	Յեզդեսե/ Օսկար մ/դ		30/06/25	19:30		
				հուլիս		
363-364	Շունն ու կատուն մ/դ		5/07/25 շաբաթ	12:00//14:00//		
365-366	Կոկորդիլոսը		5/07/25 շաբաթ	16:00//18:00		200-201. փ/դ
367-368	Սուտլիկ որսկանը մ/դ		6/07/25 կիրակի	12:00//14:00//		
369-372	Մատնաչափիկը		6/07/25 կիրակի	12:00//13:30//15:00//18:00		202-205. փ/դ
373	Իմ ընտանիքը իմ ճամպրուկի մեջ է մ/դ		7/07/25	19:30		
374	Կոմիտաս մ/դ		8/07/25	19:30		
375-376	Ոզնու Մուշտակը մ/դ		12/07/25 շաբաթ	12:00//14:00//		
377-380	Ոսկե ճուտիկը		12/07/25 շաբաթ	12:00//13:30//15:00//18:00		206-209. փ/դ
381-	Ծուղ-րու-ղու մ/դ		13/07/25	12:00//14:00//		

382			կիրակի			
383-386	Դետեկտիվ Ալենը		13/07/25 կիրակի	12:00//13:30//15:00//18:00		210-213. փ/դ
387	Яздесь/ Օսկար մ/դ		14/07/25	19:30		
388-389	Անհաղթ աքլորը մ/դ		19/07/25 շաբաթ	12:00//14:00//		
390-393	Կախարդական հեքիաթներ		19/07/25 շաբաթ	12:00//13:30//15:00//18:00		214-217. փ/դ
394-395	Սյունեցի Գոռը մ/դ		20/07/25 կիրակի	12:00//14:00//		
396-399	Դետեկտիվ Ալենը		20/07/25 կիրակի	12:00//13:30//15:00//18:00		218-221. փ/դ
400	Комментарии непристойного Тома		21/07/25	19:30		222. փ/դ
401-402	Երեք խոզուկ մ/դ		26/07/25 շաբաթ	12:00//14:00//		
403-406	Ճնճղուկը		26/07/25 շաբաթ	12:00//13:30//15:00//18:00		223-226. փ/դ
407-408	Սուտլիկ որսկանը մ/դ		27/07/25 կիրակի	12:00//14:00//		
409-412	Կարմիր գլխարկը		27/07/25 կիրակի	12:00//13:30//15:00//18:00		227-230. փ/դ
413	Яздесь մ/դ		28/07/25	19:30		
				սեպտեմբեր		
414-415	Շունն ու կատուն մ/դ		13/09/25 շաբաթ	12:00//14:00//		
416-417	Կոկորդիլոսը		13/09/25 շաբաթ	16:00//18:00		231-232. փ/դ
418-419	Սուտլիկ որսկանը մ/դ		14/09/25 կիրակի	12:00//14:00//		
420-423	Մատնաչափիկը		14/09/25 կիրակի	12:00//13:30//15:00//18:00		233-236. փ/դ
424	Իմ ընտանիքը իմ ճամպրուկի մեջ է մ/դ		15/09/25	19:30		
425-426	Ոզնու Մուշտակը մ/դ		20/09/25 շաբաթ	12:00//14:00//		
427-430	Ոսկե ճուտիկը		20/09/25 շաբաթ	12:00//13:30/15:00 18:00		237-240. փ/դ

431-432	Ծուղ-ռու-ղու մ/դ		21/09/25 կիրակի	12:00//14:00//		
433-436	Դետեկտիվ Ալենը		21/09/25 կիրակի	12:00//13:30//15:00//18:00		241-244. փ/դ
437	Ясдесь/ Օսկար մ/դ		22/09/25	19:30		
438-439	Անհաղթ աքլորը մ/դ		27/09/25 շաբաթ	12:00//14:00//		
440-443	Կախարդական հեքիաթներ		27/09/25 շաբաթ	12:00//13:30//15:00//18:00		245-248. փ/դ
444-445	Սյունեցի Գոռը մ/դ		28/09/25 կիրակի	12:00//14:00//		
446-449	Դետեկտիվ Ալենը		28/09/25 կիրակի	12:00//13:30//15:00//18:00		249-252. փ/դ
450	Ясдесь/ Օսկար մ/դ		30/09/25	19:30		
				հոկտեմբեր		
451-453	Ծուղ-ռու-ղու մ/դ		5/10/25 շաբաթ	12:00//14:00//16:00		
454-457	Դետեկտիվ Ալենը		5/10/25 շաբաթ	12:00//13:30//15:00//18:00		253-256. փ/դ
458-460	Առյուծն ու խաղալիքը մ/դ		6/10/25 կիրակի	12:00//14:00//16:00//		
461-464	Դում-դում իմաստունները և անգետները		6/10/25 կիրակի	12:00//13:30//15:00//18:00		257-260. փ/դ
465-467	Սյունեցի Գոռը մ/դ		13/10/25	12:00//14:00//16:00		
468-470	Եվ նորից կարմիր գլխարկը մ/դ		11/10/25 շաբաթ	12:00//14:00//16:00		
471-474	Մատնաչափիկը		11/10/25 շաբաթ	12:00//13:30//15:00//18:00		261-264. փ/դ
475-477	Շունն ու կատուն մ/դ		12/10/25 կիրակի	12:00//14:00//16:00//		
478-481	Կախարդական հեքիաթներ		12/10/25 կիրակի	12:00//13:30//15:00// 18:00		265-268. փ/դ
482	Իմ ընտանիքը իմ ճամպրուկի մեջ է մ/դ		20/10/25	19:30		
483-485	Ոզնու Մուշտակը մ/դ		18/10/25 շաբաթ	12:00//14:00//16:00//		

486-489	Ոսկե ճուտիկը		18/10/25 շաբաթ	12:00//13:30//15:00//18:00		269-272. փ/դ
490-492	Ծուղ-ռու-ղու մ/դ		19/10/25 կիրակի	12:00//14:00//16:00		
493-496	Դետեկտիվ Ալենը		19/10/25 կիրակի	12:00//13:30//15:00//18:00		273-276 փ/դ
497	Ябдесь/ Օսկար մ/դ		27/10/25	19:30		
498-500	Անհաղթ աքլորը մ/դ		25/10/25 շաբաթ	12:00//14:00//16:00		
501-504	Կախարդական հեքիաթներ		25/10/25 շաբաթ	12:00//13:30//15:00//18:00		277-280. փ/դ
505-507	Սյունեցի Գոռը մ/դ		26/10/25 կիրակի	12:00//14:00//16:00		
508-511	Դետեկտիվ Ալենը		26/10/25 կիրակի	12:00//13:30//15:00// 18:00		281-284. փ/դ
				նոյեմբեր		
512-514	Ծուղ-ռու-ղու մ/դ		01/11/25	12:00//14:00//16:00		
515-518	Դետեկտիվ Ալենը		01/11/25	12:00//13:30//15:00//18:00		285-288. փ/դ
519-521	Սյունեցի Գոռը մ/դ		2/11/25	12:00//14:00//16:00		
522-525	Դում-դում իմաստունները և անգետները		2/11/25	12:00//13:30//15:00//18:00		289-292. փ/դ
526-528	Ալիսան հրաշքների աշխարհում մ/դ		4/11/25	12:00//14:00//16:00		
529-531	Եվ նորից կարմիր գլխարկը մ/դ		5/11/25	12:00//14:00//16:00//		
532-535	Մատնաչափիկը		8/11/25	12:00//13:30//15:00//18:00		293-296. փ/դ
536-538	Շունն ու կատուն մ/դ		9/11/25	12:00//14:00//16:00		
539-542	Կախարդական հեքիաթներ		9/11/25	12:00//13:30//15:00//18:00		297-300. փ/դ
543	Ябдесь/ Օսկար մ/դ		11/11/25	19:30		
544-	Երեք խոզուկ մ/դ		15/11/25	12:00//14:00//16:00		

546						
547-548	Կոկորդիլոսը մ/դ		15/11/25	16:00//18:00		
549-551	Հենց էն Հուռին		16/11/25	12:00//14:00//16:00		
552-555	Մատնաչափիկը մ/դ		16/11/25	12:00//13:30//15:00 //18:00		
556	Ցդեսե/ Օսկար մ/դ		18/11/25	19:30		
557-559	Փոքրիկ Իդայի ծաղիկները մ/դ		22/11/25	12:00//14:00//16:00		
560-563	Դետեկտիվ Ալենը մ/դ		22/11/25	12:00//13:30//15:00 //18:00		
564-566	Անհաղթ աքլորը մ/դ		23/11/25	12:00//14:00//16:00		
567-570	Ոսկե ճուտիկը մ/դ		23/11/25	12:00//13:30//15:00 //18:00		
571-572	Անհաղթ աքլորը մ/դ		29/11/25	12:00//14:00//		
573-576	Կախարդական հեքիաթներ մ/դ		29/11/25	12:00//13:30//15:00 //18:00		
577-578	Առյուծն ու խաղալիքը մ/դ		30/11/25	12:00//14:00//		
579-582	Դետեկտիվ Ալենը մ/դ		30/11/25	12:00//13:30//15:00 //18:00		
դեկտեմբեր						
583	Ցդեսե/ Օսկար մ/դ		02/12/25	19:30		
584-587	Դետեկտիվ Ալենը մ/դ		6/12/25	12:00//13:30//15:00 //16:30		
588-589	Կոկորդիլոսը մ/դ		7/12/25	16:00//18:00		
590-593	Մատնաչափիկը մ/դ		10/12/25	12:00//13:30//15:00 //16:30		
594-597	Կախարդական հեքիաթներ մ/դ		11/12/25	12:00//13:30//15:00 //16:30		
598-600	Կարմիր գլխարկը մ/դ		11/12/25	12:00//13:30//15:00		
601-	Ամանորի ներկայացում մ/դ		12/12/25	12:00//14:00//16:00 //18:00/19:30		

605						
606-610	Ամանորի ներկայացում մ/դ		13/12/25	12:00//14:00//16:00//18:00/19:30		
611-615	Ամանորի ներկայացում մ/դ		14/12/25	12:00//14:00//16:00//18:00/19:30		
616-620	Ամանորի ներկայացում մ/դ		15/12/25	12:00//14:00//16:00//18:00/19:30		
621-625	Ամանորի ներկայացում մ/դ		16/12/25	12:00//14:00//16:00//18:00/19:30		
626-630	Ամանորի ներկայացում մ/դ		17/12/25	12:00//14:00//16:00//18:00/19:30		
631-635	Ամանորի ներկայացում մ/դ		18/12/25	12:00//14:00//16:00//18:00/19:30		
636-640	Ամանորի ներկայացում մ/դ		19/12/25	12:00//14:00//16:00//18:00/19:30		
641-645	Ամանորի ներկայացում մ/դ		20/12/25	12:00//14:00//16:00//18:00/19:30		
646-650	Ամանորի ներկայացում մ/դ		21/12/25	12:00//14:00//16:00//18:00/19:30		
651-655	Ամանորի ներկայացում մ/դ		22/12/25	12:00//14:00//16:00//18:00/19:30		
656-660	Ամանորի ներկայացում մ/դ		23/12/25	12:00//14:00//16:00//18:00/19:30		
661-665	Ամանորի ներկայացում մ/դ		24/12/25	12:00//14:00//16:00//18:00/19:30		
666-670	Ամանորի ներկայացում մ/դ		25/12/25	12:00//14:00//16:00//18:00/19:30		
671-675	Ամանորի ներկայացում մ/դ		25/12/25	12:00//14:00//16:00//18:00/19:30		
676-680	Ամանորի ներկայացում մ/դ		26/12/25	12:00//14:00//16:00//18:00/19:30		
681-685	Ամանորի ներկայացում մ/դ		26/12/25	12:00//14:00//16:00//18:00/19:30		
686-690	Ամանորի ներկայացում մ/դ		27/12/25	12:00//14:00//16:00//18:00/19:30		
691-695	Ամանորի ներկայացում մ/դ		27/12/25	12:00//14:00//16:00//18:00/19:30		

696-700	Ամանորի ներկայացում մ/դ		28/12/25	12:00//14:00//16:00 //18:00/19:30		
701-705	Ամանորի ներկայացում մ/դ		28/12/25	12:00//14:00//16:00 //18:00/19:30		
706-710	Ամանորի ներկայացում մ/դ		29/12/25	12:00//14:00//16:00 //18:00/19:30		
711-715	Ամանորի ներկայացում մ/դ		29/12/25	12:00//14:00//16:00 //18:00/19:30		
716-720	Ամանորի ներկայացում մ/դ		30/12/25	12:00//14:00//16:00 //18:00/19:30		
721-723	Ամանորի ներկայացում մ/դ		31/12/25	12:00//14:00//16:00		

* -ով նշված սյունակների փոփոխություններ չեն ենթադրում սույն պայմանագրում կատարվող փոփոխություններ (գրավոր կազմված և ստորագրված կողմերի կողմից), և իրականացվում են կազմակերպության առաջարկությամբ պետական մարմնի գրավոր համաձայնությամբ:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032837 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
---------- Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Սայաթ-Նովա 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001959, ՀՎՀՀ 02516413
Հեռ՝ /010/ 52-02-54
Տնօրեն՝
---------- Ա. Բաբայան
(ստորագրություն)
Կ. Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 3
«07» «02» 2025 թ.
N ՄՇԴ- 92-2025 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կազմակերպության անվանումը՝ «Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոն» ՊՈԱԿ

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝

Ծրագիր 1168	Միջոցառում 11003	**Թատերական ներկայացումներ**												
Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեից, այդ թվում ըստ ամիսների /աճողական/												
		Ի եռամսյակ			Ի կիսամյակ			9 ամիս			տարի			ԸՆԴԱՄԵՆԸ
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	463700		25400,0	**50800,0**	71966,7	93133,3	**114300,0**	152400,0	171450,0	**177800,0**	203200,0	228600,0	254000,0	**254000,0**
Ընդամենը			**25400,0**	**50800,0**	**71966,7**	**93133,3**	**114300,0**	**152400,0**	**171450,0**	**177800,0**	**203200,0**	**228600,0**	**254000,0**	**254000,0**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության,մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն N2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011032837
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
_____Հ. ՀԱԿՈԲՅԱՆ
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոն»
ՊՈԱԿ
Երևան, Սայաթ-Նովա 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001959, ՀՎՀՀ 02516413
հեռ.՝ /010/ 52-02-54
Տնօրեն՝
_____Ա. ԲԱԲԱՅԱՆ
Կ.Տ.

Հավելված N 4
«07» «02» 2025 թ.
N ՄՇԴ-92-2025 պայմանագրի

« Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոն » ՊՈԱԿ-ի հիմնական կատարողական ցուցանիշներ (ՀԿՑ)։

1. **Տոմսային տնտեսություն**

1.1. Տոմսային տնտեսության արդյունավետություն՝ տոմս 80%, հրավիրատոմս 20% հարաբերակցությունը

2. **Կառավարում**

2.1. Կառույցի ներդաշնակ կառավարում և ֆինանսների օպտիմալացում՝ իրականացված նախաձեռնությունների/գործողությունների քանակը,

2.2. Կադրային քաղաքականություն՝ վարչական և ստեղծագործական կազմի հարաբերակցությունը (տոկոսը, բյուջեն),

2.3. «Արվեստի կառավարում» մասնագիտությամբ ուսանողների արտադրական պրակտիկայի կազմակերպում՝ 2 ուսանող,

2.4. Այլ աղբյուրներից ֆինանսական մուտքեր (ներգրավված կառույցների կամ անհատների թիվը),

2.5. Ելույթավճարների քաղաքականության իրականացում՝ ելույթավճարներ (գործավարձ) ստացող աշխատակիցների քանակը, ելույթավճարների չափը,

2.6. Պետական ֆինանսավորման տոկոսային հարաբերակցությունը ֆինանսավորման այլ աղբյուրների համեմատ:

3. **Մատուցվող ծառայությունների ընդլայնում**

3.1. Միջոցառումների որակի բարձրացում՝ նոր ծառայությունների մատուցում (ծառայությունների քանակը՝ 2),

3.2. Հանդիսատեսի համար նոր հարմարավետ պայմանների ստեղծում և առկա ծառայությունների բարելավում:

4. **Հարկեր**

4.1. Տարվա ընթացքում գեներացված և վճարված բոլոր տեսակի հարկերը:

5. **Մեկենասների ներգրավում**

5.1. Մեկենասության ինստիտուտի հանրային վարկանիշի բարձրացում՝ գովազդում, տեղեկատվության հրապարակում, լուսաբանում, հանրային ճանաչելիության բարձրացմանն ուղղված այլ միջոցառումներ,

5.2. Պետություն-մասնավոր համագործակցության ընդլայնում՝ համատեղ իրականացված միջոցառումների քանակը և աջակցության չափը,

5.3. Մասնավոր ոլորտի, արտերկրի, ներկայացուցչությունների աջակցությամբ ձեռք բերված գույք, տեխնիկա, կապիտալ ներդրումներ և վերանորոգում:

6. **Միջազգային համագործակցություն**

6.1. Մասնակցություն միջազգային փառատոների՝ առնվազն 1,

6.2. Հյուրախաղային գործունեություն՝ քանակ և երկրների աշխարհագրություն՝ (առնվազն 1 և առնվազն 1 երկիր):

7. **Ինքնազբաղ, անկախ արվեստագետների ներգրավում**

7.1. Ինքնազբաղ, անկախ արվեստագետների հետ համագործակցություն՝ համատեղ ծրագրերի քանակ, դահլիճի վարձակալություն կամ տրամադրում,

7.2. Երիտասարդ արվեստագետների ներգրավում ՊՈԱԿ-ի գործունեությանը՝ 1 ստեղծագործող՝ բեմադրիչ, դերասան, երաժիշտ-կատարող և այլն:

8. <u>Հանրայնացում</u>

8.1. Ներկայություն և ակտիվություն մեդիաներում՝ մասնակցություն հեռուստատեսային և ռադիո հաղորդումներին, հոդվածներ մամուլում, ռեպորտաժներ, անդրադարձներ՝ քանակը,

8.2. ՊՈԱԿ-ի գործունեության լուսաբանում օտարերկրյա ԶԼՄ-ներում՝ հոդվածներ/հրապարակումներ/հեռարձակումներ/տեսաձայնագրություններ՝ 2,

8.3. Մամուլի ասուլիսներ՝ քանակը՝ 2,

8.4. Մեդիաների ներկայությունը միջոցառումներին և դրանց լուսաբանումները իրենց հարթակներում՝ առնվազն 2,

8.5. Ներկայություն և ակտիվություն սոցիալական ցանցերում՝ SMM ցուցիչներ, Facebook, Instagram, Telegram, կայքէջ՝ հետևորդների քանակ, դիտումներ (Like, Share) այլ ցուցիչներ,

8.6. Թատերագիտական, վերլուծական հոդվածներ, հրապարակումներ, միջոցառումներ՝ քանակը:

9. <u>Կրթական մշակութային նախագծեր</u>

9.1. Իրականացված կրթամշակութային ծրագրեր/միջոցառումների՝ քանակը, շահառուներ թիվը, թիրախային խմբեր՝ առնվազն 1, շահառուներ՝ 30:

10. <u>Մշակույթի ապակենտրոնացում՝ մարզերի մշակութային ակտիվացում</u>

10.1. Մարզերում իրականացված նախագծերի քանակը՝ առնվազն 2 և դրանցում ներգրավված մարզերի թիվը՝ առնվազն 2,

10.2. Մարզային կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի քանակը,

10.3. Մարզային փառատոների քանակը՝ առնվազն 1:

1.Որպես հիմնական կատարողական ցուցանիշներ են հանդիսանում նաև Հավելված 1-ով սահմանված ֆինանսական ցուցանիշները:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032837 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
_____ Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Հ. Թումանյանի անվան ազգային
տիկնիկային թատրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Սայաթ-Նովա 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001959, ՀՎՀՀ 02516413
Հեռ՝ /010/ 52-02-54
Տնօրեն՝
_____ Ա. Բաբայան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 5
«07» «01» 2025թ.
N ՄՇԴ-92-2025 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծրագրի կամ քաղաքա-կանության միջոցառման անվանումը	Չափորոշիչը (նկարա-գրությունը)	Չափորոշչի տեսակը	Ոչ ֆինանսական ցուցանիշներ					
			Ցուցանիշի հաստատված կանխա-տեսումը հաշվետու ժամանա-կահատվածի համար	Ցուցանիշի փոփո-խություններն ըստ համապա-տասխան իրավական ակտի (+/-)	Ճշտված ցուցանիշը հաշվետու ժամանակա-հատվածի համար (սյուն 1+սյուն 2)	Փաստացի ցուցանիշը (կատարված և ընդունված) հաշվետու ժամանակա-հատվածում	Հաստատված և փաստացի ցուցանիշների տարբերու-թյունը (սյուն 4-սյ. 3)	Տարբերության պատճառը (սյուն 2-ում նշված իրավական ակտերի հղումները և սյուն 5-ում նշված տարբե-րության պարզա-բանումները)
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032837 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
---------- Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Սայաթ-Նովա 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001959, ՀՎՀՀ 02516413
Հեռ՝ /010/ 52-02-54
Տնօրեն՝
---------- Ա. Բաբայան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 6
«07» «01» 2025 թ.
N ՄՇԴ-92-2025 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան,Կառավարական տուն 2
ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Հասցե՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N « ------ » « --- » 2025 թ.

Պետական մարմինը՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն _____ի, հիմք
(կազմակերպության անվանումը) (անուն ազգանուն)

ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ բովանդակային վարչության « » « » 2025 թ.-ի դրական եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032837 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

---------- Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝

---------- Վ. Գասպարյան
(ստորագրություն)

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Հ. Թումանյանի անվան ազգային
տիկնիկային թատրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Սայաթ-Նովա 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001959, ՀՎՀՀ 02516413
Հեռ՝ /010/ 52-02-54
Տնօրեն՝
---------- Ա. Բաբայան
(ստորագրություն)
Կ. Տ.